Այլ փոփոխուն ծախսեր

- **Չորացում**

Չորացման ծախսերը սովորաբար առաջանում են հացահատիկային մշակաբույսերի մշակության պայմաններում: Չորացման միջին ծախսերը հաշվարկվում են՝ հաշվի առնելով չորացման միջին մակարդակն ու յուրաքանչյուր միավորի չորացման ծախսը /մշակաբույսերի միջին խոնավության դեպքում/: Հաշվարկային օրինակում, չորացման ծավալի հաշվարկման համար, հիմք է ընդունվում տարեկան բերքատվության 25%-ը:

Նախնական գումարը	0.70 €/g չոր բերք
Գումարած 2 % խոնավության հեռացման դեպքում, ընդամենը.	0.50 €/g յուր 1% խոնավության հեռացման համար 1.70€/g չոր բերք

- **Կարկտահարված բերքի ապահովագրություն**

Կարկտահարված բերքի ապահովագրությունը սովորաբար սահմանվում է արտադրանքի շուկայական գնին համապատասխան: Հաշվարկի համար կարող են օգտագործվել հետևյալ մոտավոր արժեքները /LBA Munich համապատասխան/:

Մշակաբույսեր	
Տարեկան, Տրիտիկալե	1.50 %
Աշնանացան ցորեն, շաքարի ճակնդեղ, կարտոֆիլ	1.88 %
Աշնանացան գարի, Գարնանացան գարի, եգիպտացորեն	2.25 %
Վարսակ, լոբի	3.00 %
Աշնանացան ռապս, չոր ոլոռ	4.50 %

Տեսակարար կշիռները պետք է բազմապատկել արտադրանքի շուկայական գնով /առանց հավելյալ արժեքի/: Պրակտիկայում ապահովագրավճարը հաշվարկվում է ոչ թե տարեկան կտրվածքով, այլ ապահովագրվում է տվյալ մշակաբույսի դեպքում ստացվող եկամուտը:

- **Պահեստավորում, պահպանում, նախապատրաստում**

Արտադրանքի պահեստավորման, խնամքի կամ նախապատրաստման ծախսերը պետք է հաշվարկել 1 միավորի հաշվով /հա կամ տարի/:

Եթե կա բերքը բերքահավաքից անմիջապես հետո վաճառելու կամ պահեստավորելու հնարավորություն, ապա պահեստավորման ծախսը պետք է գնահատել ֆերմերային տնտեսությունից առանձին: Այս կերպ կարելի է ստուգել արդյոք եկամուտը ծածկում է

պահեստավորման ծախսերը /պահեստի փոխադրման, պահեստից դուսբերման, պահեստում քիմիական մշակման, օդափոխության/սառեցման ծախսերը, կորուստները, շինության ծախսերը և այլն/:

- **Մարքեթինգային ծախսերը**

Հարկավոր է հաշվի առնել նաև մարքեթինգային ծախսերը: Հաճախ մարքեթինգային ծախսերը ուղղակիորեն նվազեցվում են արտադրանքի շուկայական գնից և շուկայահանման գինը հաշվարկում են ֆերմերային տնտեսությունից բաց թողնման գնին համապատասխան:

- **Սերմերի լիցենզավորման գումարը**

Պրակտիկայում սերմերի լիցենզավորման վճարը իրականացվում է «Գյուղատնտեսության և բուսաբուծության համագործակցության համաձայնագրի» հիման վրա:
Վերարտադրության լիցենզավորման վճարը տարբերվում է ըստ բուսատեսակների և սահմանվում է սերմերի ընդհանուր պահաջի 1 միավորի հաշվով.

Հացահատիկի և դեղին լուպինի համար	5.10 €/g
Կարտոֆիլի համար	5.10 €/g
Լոբու, չոր ոլոռի համար	7.70 €/g

Ըստ «Գյուղատնտեսության և բուսաբուծության համագործակցային համաձայնագրի» լիցեն-զիայի համար հաշվարկվում են տարբեր տոկոսներ կախված մշակության գոտիներից: Եթե այն փոքր է 20%-ից, ֆերմերը լիցենզիայի ծախսի համար ստանում է զեղչ:

Վերարտադրության մասնաբաժինը	Զեղչը (-) կամ վերարտադրության վճար (+)	
	Հացահատիկ և հատիկավորներ	Կարտոֆիլ
0-ից < 20%	-10% -10% 20 <40% 0% 0%	
40-ից < 60 %	35 %	30 %
60-ից < 80 %	55 %	55 %
80-ից <100 %	60 %	80 %

1 հա հողատարածքի սերմի ծախսը և/կամ լիցենզավորված տարածքի 1 հա զեղչը հաշվարկվում է սերմերի առաջարկված քանակությամբ՝ կախված բուսատեսակներից, ինչպիսիք են.

- Լիցենզավորման ծախս €/g × Սերմերի առաջարկվող քանակ (g/հա) × Վերարտադ. վճ. %
- Լիցենզավորման ծախս €/g × Սերմերի առաջարկվող քանակ (g/հա) × Զեղչ %

1 հա սերմերի տարածքի վճարը (€) և/կամ 1 հա լիցենզավորված սերմերի տարածք	Լիցեն-զիայի վճար €/g	Սեր-մերի քանակ g/հա	Վերարտադրության մասնաբաժինը				
			0% - < 20 %	20% - < 40 %	40% - < 60 %	60% - < 80 %	80% - < 100 %
	Զեղչ			Վճար			
Հատիկաընդեղենի վճար/զեղչ			10 %	0 %	35 %	55 %	60 %
Տարեկան	5.10	1.20	0.62	0.00	2.15	3.37	3.68
Գարնանացան գարի, վարսակ, տրիտիկալե	5.10	1.40	0.72	0.00	2.50	3.93	4.29
Աշնանացան գարի, խառը մշակաբույսեր	5.10	1.60	0.82	0.00	2.86	4.49	4.90
Ցորեն, դեղին լուպին	5.10	1.80	0.92	0.00	3.22	5.05	5.51
Լոբի, չոր ոլոռ	5.10	2.00	1.54	0.00	5.39	8.47	9.24
Կարտոֆիլի վճար/զեղչ			10 %	0 %	30 %	55 %	80 %
Կարտոֆիլ	5.10	25	12.75	0.00	28.25	70.13	102.00

Վերոնշյալ ծախսերը և/կամ զեղչերը հաշվարկվում են սերմերի 1 հա հաշվով: Համախառն եկամտի հաշվարկման համար վերոնշյալ տես. կշիռները պետք է բազմապատկել վերարտադրության միջին մասնաբաժնով (և/կամ լիցենզավորված սերմերի մասնաբաժնով): Տրված օրինակում լիցենզավորված սերմերի 33% (= սերմերի 67%) նախատեսվում է Օրինակ 1-ի համար, մինչդեռ ինտենսիվության համար կիրառվում են լիցենզավորված սերմերը.

Օրինակ 1.

5.05 € վճարվում է վերարտադրման հողատարածքի համար
× 67 % ցորենի միջին վերարտադրողական մասնաբաժինը
= 3.37 € 1 հա ցորենի ընհանուր վճարը

Օրինակ 2.

0.92 € զեղչ լիցենզավորված սերմերի 1 հա հողատարածքի համար
× 100 % ցորենի լիցենզավորված սերմերի միջին մասնաբաժինը
= 0.92 € զեղչ 1 հա ցորենի հողատարածքի համար

Այն ֆերմերները, ովքեր չեն պարտավորվել հողերը ցելի տակ դնելու՝ ըստ Agenda 2000 (փոքր արտադրողները) ցորենի, յուղատու և պրոտեինով հարուստ մշակաբույսերի համար լիցենզավորման վճար չպետք է վճարեն:

Այն ֆերմերները, ովքեր մշակում են մինչև 5 հա կարտոֆիլ, չպետք է վճարեն կարտոֆիլի լիցենզավորման վճար:

Երկու կանոններն էլ կիրառվում են մեկը մյուսից անկախ:

Այն ֆերմերները, ովքեր չեն վճարում լիցենզավորման վճարներ՝ զեղչեր չեն կարող ստանալ: